«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի 2024թ.

(8-րդ պայմանագրային տարի)

ՍԱԿԱԳՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի) մաքրման ծառայությունների մատուցման սակագները հաշվարկվում են յուրաքանչյուր տարվա համար մրցույթի արդյունքում ձևավորված բազիսային սակագների հիման վրա՝ ճշգրտելով միայն հետևյալ գործոններով.

1) **մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխություն,**
2) **սղաճ,**
3) **«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ին մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխություն,**
4) **ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործելուց և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցում:**

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2024թ. սակագների ճշգրտում



- Վարձակալության պայմանագրով և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններով ընկերությունն ունի պարտավորություն՝ բազիսային սակագների ճշգրտման նպատակով յուրաքանչյուր տարի դիմել ՀԾԿՀ:
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն 22.08.2023թ. հերթական անգամ դիմել է ՀԾԿՀ՝ վարձակալության 8-րդ տարվա (2024թ.) համար ծառայությունների մատուցման բազիսային սակագների ճշգրտման հայտով, որով ծառայությունների մատուցման սակագներն առաջարկվում էր պահպանել գործող սակագների մակարդակին, այդ թվում՝

Սոցիալապես անապահովների համար՝ 180,0 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ):

Մյուս սպառողների համար՝ 208,419 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ):

Սակագների ճշգրտման հաշվարկներում ներառված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

- ✓ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից բաժանորդների բազայի ստացում:
- ✓ Բազայի վերլուծություն, առավել խնդրահարույց սպառողների ցանկի ընտրություն և աշխատանքային խմբերի ձևավորում՝ ընդգրկելով նաև սպառողների շահերը պաշտպանող ՀԿ-ների ներկայացուցիչներին:
- ✓ Աշխատանքային խմբերի այցելություններ տեղերում, անհրաժեշտ տվյալների գրանցում և լուսանկարում:
- ✓ Յուրաքանչյուր օրվա ավարտին գրանցված տվյալների և լուսանկարների ներկայացում ՀԾԿՀ-ի համապատասխան ստորաբաժանում, այդ տվյալների վերլուծություն և խախտման դեպքերի մասով լրացուցիչ ծավալների հաշվարկում:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2024թ. սակագների ճշգրտում

Մոնիթորինգ իրականացվել է կարճ ժամկետներով, 4 փուլերով՝

- ✓ **1-ինը՝ 2023թ. ապրիլի 10-14-ը, Արարատի մարզում,**
- ✓ **2-րդը՝ 2023թ. հունիսի 12-16-ը, Սյունիքի մարզում,**
- ✓ **3-րդը՝ 2023թ. հուլիսի 24-28-ը, Շիրակի մարզում,**
- ✓ **4-րդը՝ 2023թ. հոկտեմբերի 2-13-ը, Կոտայքի, Արագածոտնի մարզերում և Երևանում:**

Ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են

Ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով:



Արձանագրված որոշ դեպքեր

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Տեղամասեր	Այցերի քանակը	Ընդամենը խախտումների քանակը, որով հաշվարկվել է լրացուցիչ ջրաքանակ	Հաշվարկված ջրաքանակ (խմ)
Արարատի մարզ	184	40	39 204
Սյունիքի մարզ	288	91	360 446
Շիրակի մարզ	210	50	123 902
Կոտայք	141	18	19 367
Արագածոտն	53	4	3 030
Երևան	215	107	334 718
Ընդամենը	**1091**	**310**	**880 667**

Բազիսային սակագնի ճշգրտման գործոններ (դրամ/խմ՝ ներառյալ ԱԱՀ-ն)



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2024թ. սակագների ճշգրտում

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-Ի ԿՈՂՄԻՑ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ					
№	Անվանումներ	Նշանակումներ	Չափի միավոր	8-րդ տարի (2024թ.) Հայտ	8-րդ տարի (2024թ.) ՀԾԿՀ
1.	**Բազիսային սակագին (ներառյալ ԱԱՀ-ն)**	T_{bi}	**դրամ/խմ**	**180,6**	**180,6**
2.	Բազիսային սակագնի սղաճով ճշգրտվող բաժնեմասը	ΔI_b	%	60%	60%
3.	Բազիսային սակագնի էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ ճշգրտվող բաժնեմասը	ΔEP_b	%	13%	13%
4.	Բազիսային սակագնի ճշգրտման չենթարկվող բաժնեմաս	ΔNAP_b	%	27%	27%
5.	**Մանրածախ ջրամատակարարման ծավալներով պայմանավորված բազիսային սակագնի ճշգրտման մեծությունը (ներառյալ ԱԱՀ-ն)**	ΔT_{bi}	**դրամ/խմ**	**-3,864**	**-4,436**
1)	Հաշվարկային տարվան նախորդող տարվա համար ամրագրված մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալ	$V_{b(i-1)}$	մլն խմ	148,00	148,00
2)	Հաշվարկային տարվան նախորդող 12 ամիսների համար սպառողներին մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալ	$V_{f(i-1)}$	մլն խմ	152,62	153,30
6.	**Սղաճով պայմանավորված բազիսային սակագնի ճշգրտման մեծությունը (ներառյալ ԱԱՀ-ն)**		**դրամ/խմ**	**27,860**	**27,860**
1)	Հաշվարկային տարվա համար սղաճով պայմանավորված ճշգրտման գործակից	KI_i		1,257	1,257
2)	Բազիսային սակագնի ճշգրտման հայտի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա (աճողական՝ ընթացիկ տարվա սկզբից) սպառողական գների ինդեքս	II_{i-1}		103,6	103,6
7.	**էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ պայմանավորված բազիսային սակագնի ճշգրտման մեծությունը (ներառյալ ԱԱՀ-ն)**		**դրամ/խմ**	**1,986**	**1,140**
8.	**Ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված սակագնի ճշգրտման մեծությունը (ներառյալ ԱԱՀ-ն)**		**դրամ/խմ**	**-0,140**	**-0,140**
9.	Հաշվարկային տարվա մանրածախ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագինն՝ ներառյալ ԱԱՀ-ն	T_i	դրամ/խմ	206,44	205,024
10.	**Հաշվարկային տարվա մանրածախ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սահմանվող գումարային սակագին *սոցիալապես անապահով բաժանորդների համար*՝ ներառյալ ԱԱՀ-ն**	$T_{Խi}$	**դրամ/խմ**	**180,00**	**180,00**
11.	**Հաշվարկային տարվա մանրածախ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սահմանվող գումարային սակագին *մյուս բաժանորդների համար*՝ ներառյալ ԱԱՀ-ն**	$T_{Մi}$	**դրամ/խմ**	**208,419**	**205,992**

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման 2024 թվականի սակագները

№	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Սակագինը **Սոցիալապես անապահովների** համար (դրամ/խմ՝ ներառյալ ԱԱՀ-ն)	Սակագինը **Մյուս սպառողների** համար (դրամ/խմ՝ ներառյալ ԱԱՀ-ն)
1	**Ընդամենը բաժանորդներին մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագին, որից՝**	**180.00**	**205.992**
1.1	*խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման համար*	*153.00*	*175.093*
1.2	*ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման համար*	*27.00*	*30.899*
2	**Ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող այլ անձանց, ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ մատուցող համայնքներին, համայնքային բյուջետային հիմնարկներին և ոչ առևտրային կազմակերպություններին մեծածախ ծառայությունների մատուցման սակագին՝**		
2.1	*խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագին*		*41.004*
2.2	*ջրահեռացման մեծածախ ծառայության մատուցման սակագին*		*20.502*
3	**«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման սակագին**		**12.2604**

2023թ. համար ՀՀ կառավարությունը տրամադրել է սուբսիդիա և սպառողները (բացի սոցիալապես անապահովներից) ներկայումս վճարում են **200.47** դրամ/խմ: Քննարկումների արդյունքում ՀՀ կառավարությունը կշարունակի սակագների սուբսիդավորումը և ապառողները 2024թ-ին կշարունակեն վճարել նույն գումարը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ